

ԱՅՏՎԵՐ



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏԱՆՅԵ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1888

ԹԻԻ 10

ՖԻՆԱՆՍԻ ԱՅՐԸ

Սկովտիոյ արևմտեան կողմն ինկող կողքեաց մէջ կայ փոքր և անմարդաբնակ կղզի մը Սթէֆֆա անուամբ : Անոր շրջապատն է 1 ½ մղոն միայն , բայց կղզին այնպէս հետաքրքրաշարժ է որ ամառուան եղանակին մէջ նաևակ մը ամէն օր Սկովտիոյ Օպան քաղաքէն ելլելով կը տանի ճանապարհորդներ որ կուգան այցելութիւն ընել Սթէֆֆայի և անոր մօտ եղող Ալյոնա կղզոյն :

Սթէֆֆա կղզոյն ծովեզերքն ամբողջ՝ ակուայի կերպարանք առած է այրերով, որոց ամենէն մեծը կը ցուցուի պատկերին մէջ : Կազմուած է այլ և այլ բարձրութեամբ դաշտայն կոչուած քարի բնական սիւներէ , և 227 ոտք դէպ ի ներս կ'երկրնայ . 42 ոտք լայն է մուտքին վրայ և իբր 21 ոտք լայն է ներսի կողմի ծայրը : Յատակն է ծովուն կազոյտ շուրք , բայց բարձրութիւնը կը փոփոխի ծովուն մակընթացութեան և տեղատուութեան պատճառաւ :

Ջրին երեսէն մինչև ձեղունը միջակ բարձրութիւնն է 60 ոտք : Այցելուք այրը կը մտնեն նաւակներով , կամ կը շրջին անոր քովերը ուր երկաթ թել մը երկնցած է անոնց պաշտպանութեանն համար : Քանի մը տարի առաջ երկու երիտասարդներ խեղդուեցան ահագին կոհակէ մը որ այրին մէջ եկաւ մինչ անոնք կը զննէին այրը :



ՖԻՆԱՆՍԻ ԱՅՐԸ

բարու հետ կը տեսակցէին . կ'ըսէ նաև թէ ծովուն տակէն կայ սաբայտակ ճամբայ մը որ իւրանտայի հիւսիսային ծայրէն դէպ ի այրը կը տանի :



Ի՞նչ ԿՐԱՅ ԸՆՆԸ ՄԱՆԿԱՆ ՄԸ ՀԱՄՐՈՅՐԸ

Սմերիկայի բանտերէն մէկուն մէջ կայ մարդ մը զոր պիտի կոչենք Յալոբ , որ ցկեանս բանտարկութեան դատապարտուած է : Մինչև անցեալ դարուն կը համարուէր նա յուսահատ և վտանգաւոր մարդ , ամէն ժամ պատրաստ՝ ապստամբութեան , խոր-

հուրդ ըրաւ ընդհանուր խռովութիւն մը հանելու , և մատնուեցաւ իւր դաւախիցներէն մէկուն ձեռամբ : Հանեց ընդհանուր ապստամբութիւն և դարձեալ մատնուեցաւ : Բայց տակաւին չլիողուց իւր դիտաւորութիւնը . և թէ պէտ բնաւ չէր մերժեր հնազանդիչ հրամաններու , կը հնազանդէր սակայն միայն շատ գծկամակութեամբ : Յունիս ամսոյ մէջ օր մը խուսի մը օտարականներ եկան այն շէնքն ուր Յալոբ կը գտնուէր : Անոնց մին էր ծերունի մարդ մը և միւսներն էին տիկիներ :

Ֆինկալ կը կոչուի այրը հին դիւցազնի մը անունէն , որ կ'ըլուի թէ ցեղապետ մըն էր իւրանտայի հիւսիսային մասին մէջ և թէ սպաննուած է յամի Տեառն 283ին : Աւանդութիւնը կ'ըսէ թէ այրն այն սեղն է ուր իւրանտայի և Սկովտիոյ հսկաները ի-


տիկններէն երկունն ունէին փոքրիկ մանուկներ : Չանոնք առաջնորդող անձը իւր բաղկաց վրայ առաւ մանկանց մին, և միւսը կը քայլէր, մինչև որ խմբակն սկսաւ սանդուղէն վեր ելլել : Յակոբ մտտերը կ'աշխատէր խոժոռ և դաժան դէմքով ինչպէս էր սովորաբար, երբ առաջնորդողն ըսաւ

կորի երեսը : Երբ սանդուղին զլուին հասան, « Հիմա դուն ալ գիս համբուրի, » ըսաւ փոքրիկը : Յակոբի երեսը կարմրեցաւ կնոջ մը երեսին պէս, նայեցաւ մանկան անմեղ երեսը, յետոյ համբուրեց զնա այտերէն, և սակաւին սանդուղին սալքը չհասած՝ մարդուն աչուրները լե-

ՀԱՐԱՆԱՅԻՆ ԾՈՎԵՐՈՒՆ ԿՂՋԻՆԵՐԸ
 Եթէ լուսնի վրայ բնակիչներ կան, մեր երկիրը անոնց երևելու է լուսափայլ և գեղեցիկ մարմին մը շատ աւելի մեծ՝ քան որչափ լուսինը կ'երևի մեզի : Բայց զարմանալի իրողութիւն մըն է որ միշտ լուսնի մի և նոյն կողմը



«ՏՐՔՏՐ»ՆԵՐ



ԿՈՒՌՔԻ ԵՒ ՁԵՆՔՈՐ

անոր. « Յակոբ, սա փոքրիկ աղջիկն ալ դուն վեր կը բերես : » Բանտարկեալը վարանեցաւ, երեսը թթուեցուց. փոքրիկ աղջիկը երկնցուց իւր ձեռուրները և ըսաւ. « Եթէ գիս սանդուղէն վեր հանես, կը համբուրեմ քեզ : » Մարդուն երեսի խոժոռութիւնը գնաց իսկոյն և վերցուց զնա հօր մը գորովով. երբ սանդուղին կէսն հասան, փոքրիկ աղջիկը համբուրեց Յա-

ցան արտասուօք : Այն ատենէն ի վեր մարդը փոխուեցաւ, և բանտարկեալներուն մէջ ամենէն հանդարտն եղաւ : Թերևս ինք ալ ունէր այնպիսի փոքրիկ աղջիկ մը : Այլ ոք գիտէ, վասն զի բնաւ չյայտնեն իւր ներքին կեանքը : Բայց մանկան մը միջոցաւ անդի ունեցած այս արագ փոփոխութիւնը յոյս կու տայ թէ նա կրնայ թողուլ իւր չար ճամբաները :

դարձած է մեզի, այնպէս որ անոր մակերեսին միւս կէսին վրայէն երկիրս բնաւ չերևիր : Բանն այսպէս է աշխարհիս մէջ քրիստոնէութեան կամ քաղաքակրթութեան լուսոյ մասին ևս : Չարմանալի է որ մինչ մարդկային սեռին մէկ մասը կ'երկրպագէ գեղեցիկ եկեղեցիներու մէջ, կը զրկէ իւր զաւակները ընտիր դպրոցներ և գոլէճներ, և կու տայ անոնց ձեռքը ընտիր գիրքեր և լրա-

գիրներ, և անոնք կը վայելեն բոլոր այն առաւելութիւնները որ ամենէն ճարտարագործ մեքենաները կրնան ընծայել, անգին նոյն սեռին ուրիշ մէկ մասը կը գտնուի ծուլութեան, կռապաշտութեան և բազմակնութեան մէջ, կ'ուտէ մարդու միս, և ողջ ողջ կը թաղէ ձերերը անոնց բեռէն սղատ ֆնարու համար:

Բայց այս խաւարը անցնելու վրայ է, և կը յուսանք թէ շուտով պիտի չմնայ տեղ մը երկրիս վրայ ուր ի գործ դրուին վերոյիշեալ մտութիւնք: Այս յօդուածին հետ մեր դրած երկու պատկերները, կարծեմ, շատ օտարտի պիտի երևին նոյն իսկ այս կղզեաց բնիկներուն ասկէ հարիւր տարի ետքը:

Առաջին պատկերը կը ցուցնէ կաքաւելը (խաղալ) երկու ծպտեալ անձանց որ բնիկներուն յեզուու կը կոչուին «տրքորք»: Միայն ցեղապետը և անոնք որ վճարած են ծանր վարձք՝ գիտեն թէ ով են այն անձինք: Կանանց և մանկանց արգելուած է նայիլ անոնց վրայ: Այս «տրքորք»ները դատաստան կը կտրեն, և կոչուներն, աւրքեր, և յն. կը տնօրինեն: Այս սովորութիւնը կայ Նոր Բրիտանիա և Նոր Իռլանտա կղզեաց մէջ, Աւստրալիոյ հիւսիսային արևելեան կողմը:

Միւս պատկերը կը ցուցնէ այս կղզիներէն հաւաքուած կուռքեր և զէնքեր, և մէջտեղը կը գտնուի բնիկ ամաններու օրինակ մը: Անցոր են այս բիրերը և նիզակները թնդանօթներով և հրացաններով զինեալ բանակի մը դէմ, և սակայն աւելի ևս անզօր են այսպիսի կուռքերը մեր Աստուծոյն առջև որ է յաւերժ կենդանի և ամենակարող Եհովան:



ԼԱՆՏԻ ՀՈՎԻՒՆԵՐԸ

Գաղիոյ հարուստին արևմտեան կողմը, կարոն գետոյն և Սպանիոյ սահմանագլխին մէջտեղ կայ գաւառ մը որ կը կոչուի Լանտ: Գաւառին մեծ մասը կը բաղկանայ աւազուտ դաշտէ որուն վրայ հազիւ տունկ կը բուսնի, բայց ի ակքանէ (սէֆէ Բէլէն) և քանի մը ուրիշ անպիտան խոտերէ: Բնակիչներն են հո-

վիւներ, և այս պատկերը կը ցուցնէ թէ անոնք ինչպէս հսկողութիւն կ'ընեն իրենց հօտերուն: Կը քալեն իրենց ոտքը երկար ձողեր անցուցած որոց վրայ ոտքի տեղեր յարմարցուած են, վասն զի աւազը կը փակչի անոնց կոշիկներուն որոնցմով անհաճոյ կ'ըլլայ քալել, և վասն զի այս ձողերուն վրայ կենալով բարձրէն կրնան հսկել իրենց հօտերը: Մինչ մարդկանդնաձ կը կենայ ձողերուն վրայ՝ կը

յողնի, բայց այս Գաղիացի հովիւք կը կրեն իրենց հետ բաւական երկայն ձող մը այնպէս յարմարցուած՝ որ կարող են նստիլ անոր վրայ:

Մենք մանկութեան ժամանակ սովոր էինք քալել այս տեսակ ձողերով, և այս ամառ տեսնաք տղաք որ այսպէս քալելով կը զուարճանային: Տղա-

պայ կը հիւսէ ժրութեամբ: Բլրին վրայ տեսնուած մեծ ոչխարները չեն գիտեր թէ անցեալ գարնան իրենց վրայ չեն կտրուած բուրդն ինչ եղաւ. բայց հովիւը գիտէ թէ բուրդէ մանածն անկէ պատրաստուեցաւ: Եւ թուրքիոյ գիւղացի շատ տղաք երբ կը նային իրենց հայրերուն ոչխարներուն վրայ որ



ԼԱՆՏԻ ՀՈՎԻՒ

յոյ հաճելի է վեր բարձրանալ, այնպէս որ կարող ըլլան նայիլ վարձափահաս և ծեր անձանց վրայ: Բայց մենք բնաւ նստարան չէինք պտտցուններ մեր հետը ինչպէս կ'ընեն Լանտի գիւղացիները, և կը տարակուսինք որ մեր մանուկ ընթերցողներէն որ և իցէ մէկը երբէք խորհած է փոխուիլ երեք ոտքով նստարաններու:

Կը տեսնեք որ հովիւը ծայլ չկենար: Մինչ կը հսկէ իւր ոչխարները, գու-

կը վաղվազեն, կրնան ըսել. «Ասոնցմէ պիտի շինուին իմ՝ յառաջիկայ ձմեռուան գուլպաներս:»



ՆԱԻՌԻՆ ԿԱՅՄԻՆ ՓԱԹՔՈՒԻԼ

Ներունի նաւապետ մը անգամ մը ըսաւ թէ ծովային փոթորիկի ժամանակ շատ անգամ նաւորդներէն ոմանք ծովը կ'աւլուէին հովերէն և ալիքներէն, և թէ բնաւ չէր գիտեր որ տղայ

մը երբեք ծովն աւուրած ըլլայ : Եւ ասոր պատճառն այս է որ, ըսաւ, տըղաք աւելի կը յաջողին ամուր փաթթութիւնը նաւուն կայմերուն՝ քան չափահաս անձինք, իրենց մարմնոյ ծանրութեան համեմատութեամբ : Մարդիկ ծանր են և միշտ չեն կրնար բաւական պնդիւ փաթթութիւն կայմերուն այնպէս որ չէմ դնեն ալիքներուն, բայց տղաք միշտ կրնան ամուր մը փաթթութիւն ձեռք պայտէս է բանը նաև կենաց փոթորիկներուն մէջ : Չափահաս անձինք, շատ անգամ ծանր կ'ըլլան. անոնք երբեմն շատ ծանրաբեռնեալ են մեղքերով և չար ունակութիւններով, որք այնպիսի բաներ են որ կ'արդեւն զանոնք հաստատուն հաւատք ունենալէ Յիսուսի վրայ . և նոյն ժամանակը անոնց հաւատքը շատ անգամ տկար կ'ըլլայ երկար ժամանակ պատշաճ կերպով չգործածուելուն համար . և երբ կու գան մեծ փորձութիւնք, վտանգ կայ որ աւուրին : Բայց փոքրիկ տղայ մը չունենար այնպիսի ծանր բեռեր, և անոր դիւրին և բնական է հաւատայ և վստահիլ և պնդիւ փարիլ (փաթթութիւն) փրկչին : Մինչև անգամ մէկ տղեկ մը պէտք չէ որ կորսուի :

Չափահաս անձանց ալ Յիսուս ֆրիտոսի պնդիւ չփարելու քիչ վտանգ պիտի կենար եթէ մանուկ հասակէն սկսած ըլլային փարիլ անոր : Եթէ ե՛նչ Պոլէ՛ծի գրքատունն երթաք, պիտի տեսնէք որ անոր պատերուն վրայ կ'աճին փոքրիկ բաղնիկներ (առջուկ) որք անկուած են հոն քիչ ասեմ աւառ, վտանգի իւրաքանչիւր կարգ ստիտութիւն ունի բաղնի մը անկել իւր վկայականն ընդունած ժամանակը : Այս տունիկներն այնպէս փափուկ են և տըղար, որ ամենէն փոքր տղան իսկ կրնայ անոնցմէ մին փոքունել հանել քարին վրայէն իւր մասերով : Բայց թող անդամ մը անոնք մնան և աճին հոն շատ տարիներ, ա՜հ զօրաւոր մարդ մը, քան զօրաւոր մարդիկ, քայելով իրենց բոլոր ուժով՝ կարող պիտի չըլլան փոքունել հանել զանոնք պատեն որուն փակած են : Փարէ՛ Յիսուս ֆրիտոսի, մինչ փոքր տղայ մըն ես, և երբ չափահաս մարդ ըլլաւ կամ կին, բան մը պիտի չկրնայ զատել քեզ անկէ և անոր փրկարար ջրով թենէն : «Գնու որ ես հաստատ գիտեմ թէ ոչ մահը, և ոչ կեանքը, և ոչ ներկայ բաները, ու ոչ դարու բռնները, և ոչ մէկ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Սասուծոյ սէրէն՝ որ ֆրիտոս Յիսուս մեր Տէրովմով է :»

ՍՏԵՓՈՆԻ ԹԱՂՈՒՆԱԿԸ

«Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է, ու իր սգին զսպորը՝ քաղաք աւանդէն :» Ստեփան յուր Գրոց այս խօսքը կրկնեց շատ անգամ մինչ հայրիկն առջև կայնած ուժով ուժով վրձին կը քսէր իւր կարծի և գանգուր մազերուն : «Այս խօսքերը սորվիլը

դիւրին է, բայց ի գործ դնելը քիչ մը դժուար կ'երևի,» ըսաւ ինքն իրեն մտածելով :

Այն տան մէջ սովորութիւն մը կար որ իւրաքանչիւր տղայ երբ գար աւառաւոր նախաճաշի սեղանը, Ստեփանի համար մը բերնուց ըսէր, և կանոն էր որ անոնք այդ առօրեայ համարը գործածէին իբրև նշանաբան, և ջանային գործադրել օրուան մէջ :

Նոխարդ գիշեր շատ ձիւն եկած էր, և դպրոցին արձակուելէն ետք Ստեփանի աշակերտակիցները անոր հետ տուն եկած էին խաղալ պարտիզին մէջ հովէն ժողովուած ձիւնի մեծ դեղերուն հետ :

Հօրաքոյր Աննա որ իւր պատուհանին առջև նստած կար կը կարէր, կը մտածէր թէ տղայք ինչ երջանիկ ժամանակ կ'անցունէին, երբ կը լսէր անոնց ուրախ զուարթ ծիծաղելու աղաղակները : Երկու խումբի բաժնուած էին անոնք, և շինելով ձիւնէ բերդեր և ամրոցներ, սկսան ուժակոծել իրար ձիւնագնտակներով : Երկար ժամանակ աղէկ խաղացին, որովհետև պատերազմողներն հանգարտութիւն կը պահէին և սիրով կը խաղային : Բայց ի վերջոյ երբ Ստեփանին խումբէն եղաները սկսան յաղթող ելլել, միւս բերդին հրամանատարը բարկութեան շարժեցաւ : «Շիտակ չէ այս, տղաք, ես չեմ խաղար,» աղաղակեց և ամրոցներուն ետեւէն մինչ դուրս կ'ելլէր, ա՜հ ձիւնագնտակ մը եկաւ և սաստիկ զարկաւ անոր այտին : Իսկոյն երեսը կարմրեցաւ բարկութենէն. դարձաւ Ստեփանի, և, «Վատ բան է այդ, զարնել մէկուն որ չխաղար,» աղաղակեց սաքութիւնով : «Ես չէի,» պատասխանեց Ստեփան, բարկացած՝ իրեն դէմ եղած այս ամբաստանութեան վրայ, որ ստուգիլ չէր իրաւացի : «Գուն էիր,» ըսաւ միւսը : «Ես չէի, կ'ըսեմ քեզի :» «Գուն էիր :»

Տղաքը երկուքն ալ բոլորովին բարկացած էին, և իրարու վրայ վազեցին այնպիսի տաքութիւնով՝ որ Հօրաքոյր Աննա, որ կը տեսնէր խաղը կուրի փոխուած, վախցաւ թէ ծեծ կուրքի պիտի սկսէին անոնք : Բայց զարմանօք տեսաւ որ Ստեփան իսկոյն կեցաւ, և բարկացողի մը կերպէն շատ տարբեր կերպով ըսաւ զուարթութեամբ . «Այդ բանին համար կուուելն ինչ օգուտ կ'ելլէ, Յակօբ : Ես ճշմարտոր կ'ըսեմ. ես չէի զարնող : Իմ խօսքիս չե՞ս կրնար հաւատալ : Ես սաստիկ կը ցաւիմ որ պատահեցաւ այդ բանը . և պիտի գտնեմ այն ձիւն

նագնտակը նետողը և բերեմ պատերազմական ատենինն առջևը, եթէ կարող ըլլամ բռնել զնա, բայց օգուտ չունի մեր կուուելն ատոր համար :»

Յակօբի սիրտը իջաւ և կը թուէր թէ ամէցաւ իւր այնչափ կիրք ելած ըլլալուն համար : «Շատ լաւ, մեծ բան մը չէր այն,» ըսաւ երեսները ամնալէն կարմրելով : «Եկուր, ետ երթանք մեր ամրոցները :»

Ձիւնագնտակներն սկսան դարձեալ արձակուել երկու խումբերէն ուրախութեամբ, մինչև ճաշի զանգակը զարնուելով վերջացաւ խաղը :

«Ո՞վ յաղթեց,» հարցուց Ստեփանի հայրը, լրագրին վրայէն աչուրները վերցունելով մինչ տղան սենեակէն ներս կը մտնէր յօգնութենէն կարմրած և շունչը բռնուած :

«Յակօբի խումբը,» պատասխանեց թոմիկ . «Ո՞վ Ստեփան էր յաղթող,» ըսաւ Հօրաքոյր Աննա, և պատմեց թէ ինչպէս նա զսպած էր իւր կիրք թէ պէտ անոր բարկացած ընկերն այնչափ զրգուիլ խօսքեր ըրած էր անոր :

«Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է, ու իր սգին զսպորը՝ քաղաք աւանդէն :» կրկնեց անոր հայրը : «Այո, տղաս, դուն ճշմարտութեամբ մըն երբ երբ յաղթեցիր քու անձիդ :»



Ստեփանի երեսը կարմրեցաւ վարդի գոյն երբ հայրը գովեստ խօսեցաւ անոր վրայ, բայց ուրիշ աղոց պէս ջանաց ծածկել իւր զգացումները, և իբրև պատուախան միայն ու ըսաւ . յոյսով անպատշաճութեամբ . «Ուրախ եմ որ ճաշը պատրաստ է : Ձիւնագնտակ խաղալը սաստիկ կ'անօթեցունէ զմարդ :»

ՊԱՏԱՄՈՒՆ ՀԱՆՆԵԼՈՒԻ

Օգոստոս ամսոյ հանելուկին պատասխանէ «Ապահով» բառը լուծեցին. 4. Պոլիս, — Յարութիւն 4. Ներկայարեան, Գ. Ս. Գաբրիէլեան, Մեջքիւ Ս. Գաբրիէլեան, Ազատի Յ. Յովնանեան, Գրեթըլար, — Միւրան 2. Գեորգեան, Պարտիզի, — Վեգիթիա Մ. Սելիեան, Ռուստուպ, — 1. Են Յ. Թորոսեան : Եւ յիս ամսոյ հանելուկը լուծած է նաև, Մարտի, — Յարութիւն Մարտեան :

ՀԱՆՆԵԼՈՒԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

1. Բաղաք, ուր ֆրիտոս գործեց երեւի նրաք մը,
 2. Գաթի եղաքը մին,
 3. Եզիտուցի թագաւոր մը,
 4. Մայի մարգարէին հայրը,
 5. Իսրայէլացոց թագաւորներէն մին,
 6. Գրախոջ սուրբը չորս գետերէն մին :
- Մէն մի բառ կը բաղկանայ ճիշդ գրեթէ Բաւերը վերջ երկու կարգաւ . իրարու տակ շարուել ետքը, անոնց երբորդ գերեմ առնել վերէն վար կը կարդաուի քաղաք աւանդը :

Սերիկայի Միտմարտաց ընկերութեան Կարգը
Արտօնատէր ձ. 
Տնօրէն—Մարգարէ ձ. Ս. ՊԱՐՆԵՄ
Ֆինանսօրար եօգուուը . Ս. 
ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՐ 